

18. ԲՈՐ ԵԶ

Կէղնի, չէղնի մեկ մարթըմ կէղնի։ Էտ մարթ կէլլա կէրթա ղուրրաթ։ Ճրկիր իքյան ինք ունի մեկ կին, մեկ երեխա։ Երեխեն գընաց իրեն քեռու տուն։ Քեռին ելավ տվավ իրեն մի բոր հորթիկըմ։

Եփ օր իրեն հայրը ղուրբաթութենեն էկավ, մայր տուն մեռավ, էլավ էտ մարթ կարքվավ, մեկ կնիկըմ բերեց։

Էտ կնկաց էղավ մեկ տղե մի։

Էտ առչի կնկա տղից էտ տղան էղավ տասնըհինգ տարեկան, ետի կնկա տղեն էղավ տասնումեկ տարեկան, էտոր պապ թողեց գնաց ղուրբաթութեն։ Մայրն ելավ նախրորթութեն բռնեց, տղեն տրեց հետ։

Մի քանի ժամանակ մնաց, Բոր եղ մեծցավ, օր իրեն կոտոշներ մի արշում երկնցավ։ Մեկ կոտոշ մեղր էր, մեկ կոտոշ անմահութենի ջուր էր։ Տղի մամն իմացավ, օր եզն իմաստուն է, էտ առաչի տղի պահողն էտ եզն է։

Եզան ըսավ.— Դու ըսօր էս նախիր պիտի տանիս, արծեսցուս, օր տղեն հ'իրկուն հանգիստ մնա տուն։

Խաբից տղեն.— Քեզ հանգիստի համար է կթողիմ ի տուն։

Մամն հոր էր փորի, տղեն ձրքեց մեշ։

Եզ իրկուն մալը բերեց։

Եզան ըսավ.— Տար, տղին վրան կանկըցու։

Եզը տարավ, տղին վրան կանկըցուց։ Իրեն միտքն այն էր, որ օր եզը մալը կանկըցու վրան, թրքե, շռե վրան։

Եզը չթողեց, օր մեկ մալը թրքեր, շռեր։ Օրական էրկու անքամ հաց կիտար էտ տղին։ Օր ամեն անգամին հ'իսուն դրամ հաց էր։ Եփ օր մամը

նայեց, տեսավ տղեն հորին մեջը դհա ավելի լավ կմեծանա, կուրախանա։ Էկավ հարցուց.— Այ տղես, դու ինչի՞ համար էտ հորի մեջ կծիծղաս։

— Այ նանե, ես օր կծիծղամ, իմ ուրախութեն, կուշտ կուտիմ, էնոր համար։

Իրկուն էղավ, նանեն գնաց տուն։ Իրկուն Բոր եզ մալը բերեց։

Ըսավ.— Տըղա, իմ կոտոշը ծըծե։

Առաշ մեղրի կոտոշ տվավ բերան, վերջը անմահութենի կոտոշ տվավ բերան։

Մամը տեսավ, օր աղեն ամեն օր կուրախանա։— Քերոբ, լաո, էկո քեզի հորեն հանիմ։

Ըսավ.— Նանե, ինձի հտնե հորեն։

— Է,— ըսավ,— Քերոբ, ինչո՞վ քեզի հանեմ հորեն։

— Ջըվանով հանե ինձի հորեն։

— Տըղաս,— ըսավ,— ինչի՞ ինձի կխաբես, չըվան կտրավ։

Ըսավ,— Ինչի՞ չես գիտեր, մեր շիրիտն օր փեթկի վրան է, նա առ, էկի, ձիգ կոնակս ի, օր ես իմ ուժը ըսեմ քեզի։

Մամը կապեց ու քաշեց հանեց տղեն հորեն։ Բերեց ուրնե ծնված տղեն ձըգեց հորին մեջը։

— Մարկոս ջան, մի քանի օր էլ տու մանցիր հորին մեջ։ Նայե՛ ախբերտ՝ Քերոբ օր մնաց հորին մեջ, ինչքան մեծացավ։

Բոր եզը իրկուն մալ բերեց։

Ըսավ.— Մալը չթողուս օր մեկ հատը թրքե ու շռե։ Առավոտուն տար դուրս, թող թրքե ու շռե։

Բոր եզ ամեն մալ ծեծեց, թե որն օր չէր թրքեր, ըսավ՝ թրքեցեք։ Որն օր չէր շռեր, ըսավ՝ շռեցեք։

Տղի մամն էկավ առավոտ։ Համարե մինչև իրիկուն անճախ մաքրեց իրեն տղայի վրայի քաք ու շեռ։

Տղին ըսավ.— Քեզի քանի՞ գրամ հաց իտամ։

Ըսավ.— Մի հոխե մի հաց։

Տասվերկու օր տղեն մնաց հորի մեջ։

Ըպա տղեն էնպես էղավ օր, օր քսան տարվա հիվանդն էնքան չնիհարացավ։ Մամն էկավ օր տղեն հորեն հաներ։

— Մի բարակ պրթե թելըմ քիծ։

Մամը քցեց։ Տղեն կապեց մեջը, մամ քաշեց, հանեց հորեն։

Էկավ տուն, փոշտալիոն նամակ էր բերեր։ Նամակ բացեց, կարդաց. «Այս ինչ օր, այս ինչ վայրկյանին, տուն պիտի էղնիմ»։

Նամակ իրեն մարթու նամակն էր։ Եփ օր մարթն գալու էղավ, ելավ մի դաստե մի տոնիկ էփեց, տրեց իրեն կռնակի հ՝ետև, իրեն վրայի շա-

պիկ հագավ վրան։ Ապա հաց էնքան չոր էր, օր մատրտ առներ, քսան կտոր կէղներ։

Նամակի մեչ օր գրված էր, այսինչ վայրկյանին տուն պիտի էղնիմ, մարթն էն վայրկյանին ինքը դռան հ'ետև կանավ։

Իրեն տրկիցներ ճվացին, ըսեցին.—Զոմե, մարթտ էկավ։

Ինքը տռան հ'ետև իմացավ. մարթն օր տուռ բացեց, ինքն ալ մարթու հետ բացեց, տուռրն առավ Զոմե կուրծքին։

— Ըպա,— ըսավ,— կռնակս կոտրեցիր։

Լացեց ու պատավ գետին։ Մարթը վերցուց տարավ յաթախի մեչ դրեց։ Գիշեր ելավ, գողտուկ հացեր իրեն պառեկեն թափեց, էկավ պառկավ, ծանդր տըքաց։

Մարթ ըսավ.— Ինչի՞ կտըքաս։

Ըսավ.— Իմ պառեկ շատ կցավա. օր կողքիս ճաղերն է ջարթի բոլոր։

Մարթ ըսավ.— Էսօր իրեք օր անոթի իս, հաց չիս կերիր, սոված չի՞ս։

Ըսավ.— Չէ, ես անոթի չիմ։

— Հեչ բան քեզի չպի՞տի ուտիս։

— Բան չպիտի, մինակ Բոր եզան միս։

Ըսավ.—Լավ կէլնի, վաղ Բոր եզ կմորթինք։

Էտ օր պառկան, քնան։ Քերոբ լացեց ու գընաց Բոր եզան քով։

— Քերոբ ջան, ինչի՞ կիլաս։ Մի լա, աստված մեծ է։ Քու հայրը բոզ մարթու է հանդիպի, ինձի պիտի մորթե։ Բայց իրեն օտքը իրեն կոտոշը կընկնա։ Եփ օր առավոտուն ինձի պիտի մորթե, ըսե. «Պապ, Բոր եզ իմ սիրած եզն է, շատ կսիրիմ, ի՞նչ կէղնի, օր մորթելու ժամանակ օր թողիս մի կողով փոշի, մի կողով ավազ, օր լեցում Բոր եզատակ, չցավա, մորթենք»։

Ըտ խրատ Բոր եզը տվավ Քերոբին։

— Օր,—ըսավ,— քու հայրն ինձի մորթեց, տանակ բռնելու ժամանակ ես պիտի ֆըշկամ, փոշին կլեցվի հորըտ աչք։ Մի աքցի մի կզարկիմ մամիտ, ըտոք մինչև իրենց խալաբալախի հետ իյնան, տու էլի տռան սաքուն կայնի, հեծի կռնակիս ու էրթաք։ Ինչ օր աստված գրեր է, պիտի տեսնաք։

Բոր եզ ըսավ տղին.— Էլ գընա քընի, իմ ըսած խոսքերս ի չմոռնաս։ Աստված մեծ է վաղվան։

Տղեն ելավ, դընաց քընավ։

Առավոտուն պապ ըսավ.— Քերոբ, լաո, Բոր եզ բեր, մորթենք։

— Ըպա կակե, ես քու տղան չի՞մ։

— Իմ տղան իս։

— Մեկ քիչ ավազ լեցունք Բոր եզան տակ, նոր մորթենք, մեղք է։

— Ավազ առ,— ըսավ,— լաւ, առ էկո, լից եզան տակ։

Բերեց, լեցուց քթին առաջ փոշի։ Իրեն տակն ավազ փռեց։ Բոր եզ բերեց, պառկեցուց վրան։

Պապն էկավ նստավ։— Քերոբ, լաւ, տանակ տնեն առ, արի։

Մամը հարցուց.— Քերոբ, լաւ, պապտ Բոր եզ կմորթե՞։

— Հա,— ըսավ,— եզը կմորթե։ Ել,— ըսավ,— երթանք հոնի, օտներ բռնե, քերթե։

Մամ տղին լսեց, հիվանդ էր, ելավ գնաց եզան քով նստավ, օր մարթ մորթե եզն, ինք սեյր էնե։

Տղեն պապուն ըսավ.— Ես կէրթամ դուրս։

Տղեն ելավ, կայնավ տուռը՝ սաքուն։

Պապ ըսավ. «Յա՜, աստված» ու դանակն առավ, եզան գլուխ բռոնեց, պիտի մորթեր։ Եզ ֆշկաց, մի բուռըմ փոշի լեցվավ պապու աչք։

Մամն օր նստեր էր եզան օտներու դեմ, մի աքցի զարկեց եզ մամուն։ Ուրեն օտք լե կոարավ։ Եզ ելավ գընաց։ Տղին ըսավ.—Հեծի վրաս։

Տղեն հեծավ, սկսեցին ճանապարհ երթալու։ Երեք օր գնացին, մի սարի մը գլուխ ելան. սարի գլուխ ահագին դուզ էր։ Իշան դուզի մեջն, եզան աչք առավ չայիրի կանաչներ։ Ըսավ.— Հում կաթի ուտող, հողեզեն մարթն հեչ խիղճ ու աստված չունի, օր էսօր իրեք օր ես անոթի իմ։

Ըսավ.— Իշի վրայես, մեկ քիչ արածիմ։ Ել, քաշվի ծառի գլուխ։

Ինքն ալ սկսեց արածիլ։ Արծավ մեկ կուշտ, էկավ ջուր խմեց, գնաց նստավ։

Տեսավ արևուն առաջ բրոնըվավ։ էկավ մոտեցավ, ըսավ.— Կամ մաշ, կամ գյուլաշ։

Բոր եզ նստած տեղեն ճըվաց.— Գյուլաշ։

Ու ելավ։ Ան օր, առավոտնե մինչև իրիկուն, մեկ-մեկի չկարողացավ տրեց գետին։

Ուշափ ըսավ.— Առավոտուն կիգամ։

Առավոտուն լուս բացվավ, ուշափ էկավ։ Կպան գյուլաշ մինչև իրիկվան մոտ։ Էրկու անգամ Բոր եզ ուշափին դրեց գետին։ Երեք անգամին ուշափ Բոր եզան տրավ գետին ու սկսավ քիչ-քիչ ուտել։ Կերավ, պարպելու ժամանակըն ուշափին Բոր եզ ըսավ.— Ամանաթ աստված, ամանաթ ծառ։

Ուշափն օր կերավ Բոր եզը փրծավ, էկավ ջուր խմեց, ըսավ.— Ես էտքան աշխարքի մեջ բան բռներ էի, թե մարթ, թե թռչուններ, այդ ծառին առաջը կերիր էի, օր իմ սովորական տեխն է, ոչ մի մարթ չըսեր. «Ամանաթ աստված, ամանաթ ծառ», բայց Բոր եզն ըսավ։

Սկսեց ջուր խմել։ Տղան իջավ ծառին վրայեն, ուշափի կոնակին

հեծավ։ Ուշափ չիմացավ։ Ուշաքի շիթկավ օր տեպի ծառը պիտի աշեր, տղան իջավ ուշափի հետեն, ըսավ.—Աբո, ես քեզնից ծնվա։

Ըսավ,— Դու ինձնից չծնվար, դու գքնա դուվա էրե Բոր եղան, օր թե քեզի համար ըսավ՝ «Ամանաթ ասաված, ամանաթ ծառ»։ Կէղնիս ինձի տղա։

Ըսավ.— էկե, հեծի կռնակիս։

Շարունակեցին իրենց ճանապարհ։ Էկան գնացին իրենց տուն։ Գնաց տուն, իջուց տղեն վար։ Մե բանցը քոշկ մ՝ է իրեն տուն։ Իրեն չանան ճմռեց քիչ մը։ Քառասուն հատ բալնիս հանեց, զարկեց տուռ բացեց, մտավ ներս։

Չորս օր սպասեց ասուն։ Տղեն իրեն հոր բնութեն վերցեց։

Ըսավ.— Օղուլ, առ բալնիսատան քու քով, ես կէրթամ ավի։ Քառասուն օրեն նորեն կիգամ։

Եկավ գնաց ավի, մինակ տղա էր տուն։ Ամեն օր տառապանքի մեջ էր։ «Տեր աստված, դու ե՞փ զիս պիտի ազատիս էսօր ձեռքեն,— ըսավ։ Էս քառասուն բալնիք է իմ քովս, հալբաթ էս քառասուն բալնիքին կոդ-սլանք կա, բանամ, աշիմ ի՞նչ կա»։

Գնաց, մի հ՝օդայի տուռ բացեց։ Նայեց օր ամբողջ տեսակ-տեսակ թռչուններ կա մեջ։ Մի թոփալ գելըմ կապված է տռան հ՝ետև։ Տուռը կոպղեց էկավ։

Մյուս բալնիք առավ, մյուս տուռը բացեց։ Տեսավ ամբողջ մարթ-կանց օսկոռ է։

Մյուս հ՝օդան բացեց, ամբողջ օշխար էր մեջ։ Մյուս հ՝օդան բացեց, մի հ՝ախբուրըմ, առծաթի ջուր կվաղե։ Տարավ, մատ տվեց հ՝ախբրին տեմ, իրեն մատ տարցավ առծաթ։

Մի հ՝օգայի տուռ բացեց, տեսավ մի հ՝ախբուրըմ կվաղե։ Նայեց օսկի ջուր է։ Էն մատն օր տվեց առծաթ ջրին առաջ, էտտեղ տվեց օսկի ջրին առաջ, մատ տարցավ օսկի։ Մատ փաթթեց վախեն։ «Պապս պի-տի գա, ինձ տեսնա ու սպաննե»։

Էտ հ՝օդաներ գոցեց, մյուս հ՝օդաներ սկսեց բանալ։ Բացեց հ՝օդան, նայեց օր, չորս հատ ձի կապված է մեջ։ Նայեց հ՝օդայի մեջ, տռան ետև, մի խորուն հոր մ՝ է փորված։ Բայց ձիանն հորուն էնդին ին կապված։ Տղան անցավ հորին էնդին, նայեց ձիանուն, ըսավ. «Ինչ լավ ձիան ին»։ Տղի սիրտը փոխվավ, ըսավ. «Պիտի հեծնամ ձի մը ու փախնիմ»։

Սրթթա սիվտուկ ձին քաշեց, օր հորեն պիտի անցու, բայց նա չանցավ։ Ըսավ. «Ատի գեշ է»։ Կարմիրը բերեց, էնիկն ալ չանցավ, սև ձին բերեց, նա լա չանցավ, մոխրագույն ձին քաշեց, ձին թռավ, անցավ էտտիեն։ Ըսավ. «Այս ձին ինձի պիտի ազատե»։

Ետ առավ, ձին տեխ կապեց։ Տուռը կոդպեց, եկավ դուրս։

Մյուս հ՝օդայի դուռ բացեց, նայեց օր ամբողջ զենք էր մեջ։ Ըսավ. «Իմ էրթալու ժամանակ պիտի զենքըմ տանիմ հետս»։

Նա գոցեց, մյուս սենյակ բացեց, զանազան կերպով ըզգեստներ մեջն էր։ Ըսավ. «Ես պիտի ինձի խատրմ շոր տանիմ»։

Տուռ կոպղեց, ետ էկավ, մյուս բոլոր սենյակներ բացեց, ամեն տեսակ, աստված ինչ օր ստեղծեր էր, մեջ կգըտնուեր, հավուն կաթ, օցոն լեղին մենակ պակաս էր։

Տուռ կոպղեց, էկավ տուն, հանգիստ նստավ։ Ու մտածեց, ըսավ. «Տե՜ր ամենակալ աստված, ե՞րբ պիտի էղնի, ես էն անաստվածի ձեռնեն ազատվիմ»։

Էտ մտածմունքի մեջն էր, ուշափ տուռ զարկավ, տողտղալով ելավ, տուռ բացեց, մեյ մը նայեց օր ուշափի ումուզին մի ծառըմ կա, ծառ քառասուն հազար ճղեն էր։ Համարե իրեն հաշիվով ամեն մեկ ճղին քառասուն հազար թռչուններ կար։

Ուշափ բերեց ներս, տղեն ուրեն մտածմունքի մեջ. «Ե՞րբ կէղնի ես էս անաստվածի ձեռնեն ազատվիմ, ախըր մի օր ինձ էլ էսպես պիտի էնե»։

Ուշափի աչքն բիրդան առավ տղի մատն։

Տղին ըսավ.— Մատտ ի՞նչ իս էրիր։

Տղեն ըսավ.— Ոչինչ, բա մը չէղիր է։

Ուշափն իմացավ օր ինչ էր։ Ըսավ—Ուղիղ խոսա, քեզ կսպաննիմ, օր թե ուղիղ չխոսաս։

Տղեն ըսավ.— Ի՞նչ ուղիղ պիտի խոսամ։ Մատս ինկեր է տռան տեմ։

Ուշափ էնպես հերսով, բանցը ձայնով բոռաց, ըսավ տռան.—Անաստված, մի՞թե տու իս իմ տղի մատը կտրի։

Նա կանչեց ու ըսավ.— Չէ, ես իմ աստված, ես չիմ էրի։

— Ա՜յ զավակս,— ըսավ,— ուղիղ խոսա։ Այ օղուլ, ո՞վ է զարկի։

— Քեզից պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, հայրիկ, տանակն է կտրիր, միս կտրելու ժամանակ՝ տանակ կտրեց։

Ուշափը բոռաց բանցը ձենով.— Անաստված տանակ, ի՞նչի ես կտրիր իմ տղայի ձեռք։

Տանակ իրեն սարսափելեն բոռաց ու ըսավ.— Ես չիմ կտրիր ի, ի՞նչի անխզճութեն կէնե, քըցե իմ վրաս։

— Ա՜յ զավակս,— ըսավ,— ուղիղ ըսե, ո՞վ է կտրեր ձեռքտ։

— Փեռ կճղի,— ըսավ,— ուրաքն է կտրիր է։

Բոռաց ու ըսավ ուրաքին.— Ի՞նչի իս կտրիր տղայիս ձեռքն։

— Ոչ մի անքամ ես չիմ կտրիր ի։

Տղի շրթունները հ՝ուհու վախեցուն, սեցան, ինքն ալ կանգնած մնաց։

— Այ զավակս, ես գիտիմ, մեկ անքամ էլ էտ խալթ չէնիս։

Նլան իրենց հաց կերան ու քնան։ Լուս բացվավ։ Հայրը ըսավ.— Կելնիմ, կէրթամ ավի։

Նա ելավ գնաց ավի, տղեն իրեն հաց կերավ, իրեն աստված կանչեց, բալնին տարավ, ձիու տուռ բացեց։ Ձին քաշեց տուրս։ Բայց ձին իմաստուն էր, ըսավ տղին.—Ես, գիտե՞ս, երփ օր կիգամ քու հետ, թե օր տու խելք ունիս, մեք պիտի աղատվիք։ Ազատող աստված, մենք պիտի աղատվիք էտ անաստվածի ձեռքեն։

Ձին ըսավ.— Գնա, սենյակի տուռ բաց։

Գընաց, բացեց մի խաթըմ իրեն շոր առավ, մյուս սենյակի տուռը բացեց, ինքն իրեն մի զենք առավ, էկավ ձիուն քով։

Ձին ըսավ.— Բավականի չափ գնա օսկի առ։

Գնաց, բավականի չափ օսկի առավ, գնաց տուն, մյուս սենյակ բացեց, լավ այյարըմ բերեց, զարկեց ձիու վրան։ Ձին ըսավ.— Հ՝ու՞ր պիտի էրթաս։ Ինչքան սենյակներու մեջ թոչուններ կան, պիտի արցակիս, նորեն էրթանք։

Բայց էն ձին շատ իմաստուն ձի էր, օր աստված լեզու տվիր էր, մարդկանց հետ կխոսեր։

— Երփ, տրցակելու ժամանակ. մի թոփալ դելըմ կա, նա չիս արցակիր։

— Լավ,— ըսավ։

Տղին գնաց, տուռ բացեց, քառասուն սենյակի տուռն ալ բացեց, բոլոր տունեն դուրս էրեց։ Էկավ ձիուն մոտ։ Ձին ըսավ.— Գնա, մի քիչ աղ առ, մի լեսան առ, մի սանդրըմ առ, մե տանակ մ՝առ, մե փարչըմ ջուր առ։ Գընա, գել արցակե, էկե ինձի հեծե։

Գնաց, գել արցակեց, էկավ ձին հեծավ, ընկան ճանապարհ։ Տղին ըսավ.— Գիտե՞ս, գայլ ուշափին խաբար տանողն է, ըզգուշ կայնիր, օր ուշափ մեզ չը բըռնե։ Թեզ-թեզ հ՝ետևտ ի նայե։

Մի իրեք սահաթվա ճանապարհ քշեցին, մեյ մը հ՝ետև նայեց, ձայն էկավ.— Այ զավակս, սպասե, միասին էրթանք։

Ձին ասաց.— Ձիդ սանդր։

Սանդր ձգեց, էղավ մի խոշոր անտառ մի։ Մինչև ուշափ անտառեն ելավ, էնոնք իրեք սահաթվան ճանապարհ ավելի կտրեցին։ Մե քիչ գընաց, ձին ըսավ.— Ետևդ ի նայե։

Ետև նայեց, ըսավ.— Հասավ մեզի։

— Տանակը ձիգ,— Ըսավ։

Ամբողջ տարցավ սուր։ Ուշափ էկավ, ընկավ սուրերու մեչ, օտքիր դտրուտեց։ Մինչև նստավ, ելավ, իրեք սհաթվան ճանապարհ կտրեցին։

Տղան նայեց ետև, ուշափի ձայն էկավ։ Ուշափ ըսավ.—Այ զավակս, մի՞թե մարթ իրեն հոր հետ խիյանաթ պիտի ըլլա։

Տղան մտիկ չէրավ, ձին ըսավ.—Զիգ աղ։

Ամբողջ էղավ աղ, շոր ջրիր։ Ուշափ վերքոտ մտավ մեջ։ Վերքի կսկրծուն, մինչև նստավ, ելավ, բավական ճանապարհ կտրեցին։

Ուշափ հասավ, տղին պիտի մոտենա։—Այ տղա, չիս կայնիր, ձինս թող հոս ու գընա։

Ձին ըսավ.— Զիգ լեսան։

Ամբողջ էղավ ապառաժ քար, վեր դից կիլլա, կսահի վար, սապոնի նման քար։

Բավական ճանապարհ գնացին, մինչև հետկից ելավ ուշափ։ Մոտեցավ տղին ու հասավ։

— Գիտե՞ս օր հասա քեզի ես, մարմնիդ խոշոր օսկորդ պիտի թողիմ անկաճտ ի։ Էսօր առավոտնե մինչև հ՝իրիկուն հոգիս հանեցիր անտառներու մեջ, ջրերուն ու քարերուն։

Էտ խոսք հ՝ուշափ ըսավ տղին, ձին ըսավ.— Տըղա, փարչից մե քիչ ջուր ձգե մեր առաջ, բայց փարչ ամբողջ զարկ ետև։

Ետև էղավ ծով, առաջ էղավ մի խոշոր գետ։ Ուշափն ըսավ.— Այ զավակս, հ՝ու՞ստեն անցար։

Տղեն դետն անցնելեն տարձավ ուշափին, խոսաց ու ըսավ.— Այս քարի վրավեն կոխեցի, թռա մյուս քարի վրա, անցա։

Ուշափ աչքեր մթնավ հեբսեն ու ձըքեց իրեն ջուրը ու խեղթվեցավ։

Տղան իրեն ձին քշեց, մութ կոխեց գետին։— Վա՜յ,— ըսավ,— խարիբն ու քոռը մեկ պիտի ըլլան աշխարհքիս էրես։

Նայեց, մի կրակըմ կերևա։ Հինգ ժամ իրեն ձին քշեց, անճախ հասավ կրակին մոտ։ Կրակին մոտ չէրթացդան, շներ վազեցին վրան։ Նայեց, իրեք մարթ կա կրակին տեմ։

Տղան բոռաց ու ըսավ էտ մարթերուն.— Հեչ խիղճ, աստված չունե՞ք, շներ հիմա զիս ալ, իմ ձին ալ խածեն պիտի։

Հովիվներ ելան, վազեցին տեպի էտ մարթ.

— Մի՞թե տու օչխարի գող իս։

Նա ըսավ.— Ոչ, խարիբն ու քոռ մեկ է, ես ճամբորդ մարթ իմ։

Հովիվներ առան տղին ու տարան մոտ իրենց։—Ա՜յ եխբայր,—ըսեցին,— դու ո՞րտեղացի իս, կամ հ՝ու՞ր պիտի էրթաս։

— Ի՞նչ կհարցնիք, էն ինչ իմ գլուխ ելեր է, ոչ մի մարթու գլուխ աստված չի գրե։ Կարելի է տուք ընձի ճանապարհըմ ցուց տաք, էրթամ, ես մի խարիբ տղա իմ։

Հովիվներ մեկ մեկի խոսացին. «Կոտ մի կաթ կթեք, տանք ուտե, ընկնա ճանապարհ, երթա։ Հաց պատրաստեցին, կաթ կթեցին, տվեցին, տղան կերավ։

Տղան հարցուց, ըսավ.— Ես ի՞նչ թագավորին հողն է։

Ըսավ.— Ես Խազալ քաղաքն է։ Շատ հեռու չէ մեզնից, մե ս՛հաթ ու կիսու ճանապարհ է։

Ըսավ.— Լավ, աշխատանք կգտնվի՞ էտ տեխն օր ես էրթամ, ընձի աշխատանք գտնիմ։

Ըսեցին.— Ոչ, մինակ թագավորի խազբանդն է մեռած, ըս քանի օր էնոր համար ժուռ կիգան, մարթ չկա։

— Աճայիր,— ըսավ,— էնոր խազբանդն ի՞նչ տեսակ մարթ է օր, ժուռ կիգան, չեն գտնիր։

Ըսավ.— Մի քյալ մարթ մ՝ էր։

Ըսավ.— Ես մի օսկի կիտամ ձեզի, օր տուք ընձի մի օչխարըմ տաք։ Օչխարին միսըն ձեզի, կաշին ալ ձեզի, մինակ օչխարին խաշըն մաքրեք, ինձի տվեք։

Բոլոր սիրով ընդունեցին մարթու խոսք ու կատարեցին։

Մարթն առավ իրեն խաշը, քաշեց իրեն գլոխ, իրեն վրավեն հանեց, էղավ քյալ, հեծավ ձին, մոտեցավ քաղաքին։

Ձին ըսավ.— Տու քյալ տղա մը էզար, տանիս ինձ քաղաք, քեզնից պիտի առնին։ Ինձ ըստեզ արցակե, իմ պոշեն մե դաստա մի մազ քաշե։ Քու լավ շորերդ ի հանե վրավետ։ Դաստա մազ դիր ճերբդ, շորերտ ի կապե իմ վրաս, ինձի թող, ես էրթամ։ Վերջ, ժամանակն օր մազը վառեցիր, ես պատրաստ կայնած իմ քու քով։

Տղան ձիու խոսք էրեց, իրեն քյալը քաշեց գլոխ, մազեր տրեց ճերբն, ձին հ՝ընկցուց ճանապարհին, ինք տեպի քաղաք էկավ։

Գընաց թագավորի պալատի քով հ՝ախբուր կար էտտեխն, հ՝ախբրեն ջուր խմեց, ելավ կանավ հ՝ախբրի կողք։

Ջանդարման ըսավ.— Այ՛ տղա, չի՞ս էղնիր թագավորին խազբանդ։

— Հա,— ըսավ,— թե օր թագավոր տանի, ես պիտի էղնիմ։

Ջանդարմեն առավ քյալը ու տարավ թագավորի մոտ։ Գրելեն հետո խազբանդին հանձնեցին հարյուր հատ խազ։ Բոստանները ցույց տվեցին, թե բոստաններու քովը պիտի արծաս, ավելի հեռուն չպիտի տանիս։

Ամեն օր տարավ արծեց, թե ամիս մը, թե էրկու։ Ամառ էկավ, խազեր առավ, տարավ խիարի բոստանի մոտ։ Բոստանչուն ըսավ.— Կարելի՞ է խիյարըմ տաս ուտինք, ամառ է։

Բոստանչին շատ բարկացավ վրեն ու քուֆը տվավ։ Իրեն մտքի մեջ ըսավ. «Թե ես թողիմ քեզի, աստված չթողնեն»։

Երփ ցերեկ էկավ, քուն էկավ, բոստանչին քնավ։ Քյալն ելավ, խաշը քաշեց գլխեն հանեց, մազը հանեց ջերեն ու վառեց։

Ձին պատրաստ եղավ իրան մոտ։ Բայց թագավորի փոքր ախչիկ պալատի մոտեն կուշեր տեպի խազբանդ։

Խազբանդ հագավ իրեն շորեր, առավ իրեն զենքն, հեծավ ձին ու աստված կանչեց, ընկավ բոստնի մեջ։ Էնքան գնաց էկավ օր, թե՝ կըսեր քսան տարի է կանաչ չի բուսներ էստեխ։

Թագավորին ախչիկ լավ տիտոզութեն էրեց։ Երփ իշավ ձիու վրա-ջեն, մազ ձգեց իրեն ճերն, ձին թողեց գնաց, իրեն խաշ քաշեց գլոխ։ Լացեց ու վազեց դեպի բոստանչին։— Աստված,— ըսավ,— քու տունդ քանդե՝ ել, բոսանիտ արություն գեշ տարցավ։

Բոստանչին նայեց իր բոստանին, սկսեց լալ Քյալեն ավելի։

Հարցուց Քյալիմեն.— Ի՞նչ եղավ ու ի՞նչ տարցավ, իմ բոստանս էսպես էղավ։

Քյալը պատասխան տվավ, ըսավ.— Էկավ մի հարյուր հատ ձի, մե ձի մի խսրախ էր միչտան, բոլոր օրց ձի են, ընկած են խսրախի հ՝ետև, առավոտնե մինչև հիմա չկըրցա հաներ բոստանի մեչեն ու էկա քեզ արթընցուցի։

Խոսք փրցնելեն հետո, արև մտավ ու խազբանդն առավ խաղեր, էկավ տուն։

Ամեն օր թագավորին իրեք ախչիկներ չէին թողներ օր Քյալ իրեն օտ տներ պալատին մեչ։

Պզտիկ ախչիկ բայց երփ օր էտ բաներ տեսավ Քյալից, Քյալ էկավ տեպի պալատն, պզտիկ ախչիկ թեղըմ վազեց ու հաց պատրաստեց, տարավ։

Քյալն ինքն իրեն զարմացավ, էտտեխ նստավ ու իրեն հաց կերավ, ելավ գընաց։ Ախչիկ թողեց գընաց տուն, բայց հատնի չէրեց Քյալին, ատ ի՞նչ ձի էր, հեծար։

Քյալ ոչ մեկ բանե խաբար չէր, բայց ախչիկ սիրահարվավ վրան։

Քյալն իրեն ընթրիքեն հետո գնաց, քնավ։

Առավոտուն Քյալն էլավ, գնաց ձմերկի բոստան։ Գնաց բոստանչուց խընթըրվավ թե.— Կարելի՞ է մեկ փոքր ձմերուկ մի տաս ուտիմ։

Բոստանչին լավըմ բարկացավ, քըֆրեց ու թակեց Քյալին։

Քյալն ըսավ ուր մտքի մեջ. «Էս քու հերրտ կանիծեմ քիչ հետո»։

Երփ օր արև տաքցավ, բոստանչին գնաց պառկավ, Քյալն ելավ գնաց, խաշ գլխեն հանեց։ Ճերեն հանեց մազ, վառեց, ձին իրեն ըզգեստներով պատրաստ կայնավ քով։

Իր շորեր հագավ, ձին հեծավ, մտավ բոստանի մեջ, էնպես ավե-

քակ տարցուց բոստան օր, ոչ մեկ մարթ էստեղ բան ցանած չէղեր էր։

Թագավորի ախչիկ էտ օրն էլ լավ տիտողութեն էրեց։

Քյալ իշավ ձիու վրայեն, ձին արցակեց, լալով դեպի բոստանչին գընաց։ Արթնցուց բոստանչին ու ըսավ.— Այ եխբայր, մե հարյուր հատ կով էկան, մտան քու բոստանի մեչ, էնոնք ելան վիր, ես իչա վար, չկարողացանք հանիլ։

Բոստանչին սկսեց լալ։ Արև մար մտավ, խազբանդ առավ ուր խազեր, գնաց տուն։ Թագավորի պզտի ախչիկն գողացավ տնեն մի փոքր ղոշակ մի, առավ գնաց տեպի Քյալի սենյակ։— Այ,— ըսավ,— քյալ մարթ, մեխք իս, երիտասարթ տղա յիս, ձիգ տակտ, հանգիստ քնե։

Քյալ շնորհակալ էղավ, պառկավ քնավ։

Առավոտուն լուս ծագեց, խազեր թողեց, գընաց բոստանի մոտ։

Խնթրեց.— Բոստանչի, մե քիչ մի խաուն իտաս հ'էսօր, տանիմ ուտիմ։

Բոստանչին բարկացավ, լավրմ թակեց Քյալին։ Քյալ առավ իրեն խազեր, բավական ճանապարհ հեռեցավ ուրեն մոտեն։ Թորկեց ուրեն խազեր, էկավ բաղչանչու վրան պահապանություն ըրավ։ Նա օր քնավ, Քյալ վառեց ձիուն-մազ ու ձին պատրաստ, հեծավ գընաց։ Ընկավ բաղի մեչ, ավրեց, ավերակ տարցուց։

Գնաց իշավ, իրեն քյալ քաշեց գլուխ, էկավ, բոստանչին արթնցուց։

Բոստանչուն ըսավ.— Իսուն-վաթսուն հատ գոմեշներ էկան, սկսեցին մեկ-մեկու հետ կռիվ էնել։ Ես չկարողացա օր հանենք մեչեն։ Ավերակ տարցուցին, թողին գընացին։

Բոստանչին, խեղճն, լաց, մռմռաց, ելավ գնաց իրեն տուն։

Թագավորին ախչիկ աս իրեք բան տեսավ Քյալի վրա։ Ըսավ.— Թե օր ես մեռնիմ՝ հողին հետ պիտի պսակվիմ, թե օր սաղ մնամ՝ Քյալին հետ պիտի պսակվիմ։

Աստված վկա բռնեց։ Մեկ, ին, տաս օր անցավ մեչտեղ։

Թագավորի մեծ ախչիկ օրթանչի ախչկան ըսավ.— Մենք խորուրթ պիտի էնինք, իսկ էկիր է իմ կարգելու ժամանակն անցիր է, քու ժամանակտ ու պզտիկ քուրոչ ժամանակն է էկի կարգվելու։ Ի՞նչպես էնինք, օր մեր պապին հայտնինք։

Օրթանչի ախչիկ ասաց.— Մեր պզտիկ քուրն էլ կանչինք, ինչ օր էն ըսավ, կատարինք։

Կանչեցին իրենց քուր, ասեցին.— Մեր կարգվելու ժամանակն է, ի՞նչ տեսակով մեր պապուն հայտնինք։

Պզտիկ քուր ըսավ.— Բերեք իրեք հատ ձմերուկ, մեկ խոշոր, մեկ օրթանչի, մեկ պզտիկ։ Իրեք էլ դանակ բերեք, մեկ մեծ, մեկ օրթանչի, մեկ պզտիկ։ Իրեք էլ փոլատ բերեք, մեկ մեծ, մեկ օրթանչի, մեկ պզտիկ։

Գացին, բերին, տանակներ զարկեց ամեկ ուր ձմերուկի մեչ, մեծ՝ մեծի մեչ, օրթանչին՝ օրթանչու մեչ, պզտիկ՝ պզտիկին։

— Իրեք հատ,— ըսավ,— հասակավոր մարթ բերեք, մեկ ծեր, մեկ հասակավոր, մեկ երիտասարթ։

Տվեց իրենց ձեռք, ըսավ.— Տարեք, արեք թագավորի սեղանին։

Էն օրն ալ ժողովք էր։ Թագավոր ասեց.— Զեզանից կհարցնիմ, էտ ի՞նչ նշանակ է։

Մեկ թռավ, ըսավ.— Գիտե՞ս աա ինչ է։ Ասի մեծ՝ քու մեծ ախչիկն է, էնոր ամուսնանալու ժամանակն անցավ, օրթանչին՝ ամուսնանալու ժամանակն է, անցեր է, փոքրն ալ հասեր է, ամուսնանալու ժամանակն է ճիշտ։

Թագավոր ըսավ.— Դու էկեք ձմերկներ կերեք ու ձեր տղաքներ բերեք մեր պալատի տուռ, կայնեցուցեք, ու պալատի պատուհանի առջևեն անցուցեք։ Ախչիկներուս ձեռք կիտամ խնձոր, ում օր զարկին, էնրան կիտամ, առանց մեկ խոսք խոսալու։

Ամեն մարթ իրեն ունեցած-չունեցած ծախեց, հաքցուց իր տղային ու բերեց, կանգցուց թագավորի պալատի տուռ, օր իր տղային հավնին։

Շատ մարթիկներ բերեցին, անցուցին։ Մեծ ախչիկ խնձոր զարկեց ողրի տղի ճակատ, նա ընդունվավ։

Երկրորթ ախչիկն զարկեց խաղու տղի ճակատին, նա էլ ընդունվավ։

Պզտիկ ախչիկ ոչ մեկ մարթու չզարկեց։

Հայտարարություն տվեցին քաղաքի մեջ, ոչ մեկ մարթ չկայնի, դա։

Ինկան թաղեր, բոլոր հավաքեցին. ո՞ր անցուցին, չզարկեց, խնձոր ձեռ մնաց։

Ըսեցին. «Մարթ չմնաց, մնաց մինակ Քյալ»։

Գնացին Քյալը բերեցին։ Երփ օր անցնելու էղավ, ախչիկ բանցրացուց խնձոր ու զարկեց գլխուն։ Քյալը գլոխ քերեց ու փախավ։ Ժողովուրթ ըսեցին ախչկան.— Տու սխալվար։

Թագավոր ըսավ.— Կրկին ժողովուրթ անցուցեք։

Կրկին անցուցին, ախչիկ ոչ մեկ մարթու չզարկեց։ Ամենեն վերջ գենա զարկեց Քյալի գլխուն։

Թագավոր իր խոսքից ստիպված ախչիկ տվեց Քյալին։ Երփ ախչիկն առավ՝ փոքրիկ սենյակ մի, աղտոտ ձի մի տվեց Քյալին։

Շատ օրեր անցան օրթան։ Թագավորին ցավրմ պատահավ, հիվընգացավ։ Ինչքան բժիշկ բերեցին, ոչ մեկ բժիշկ չկարողացավ առողջացներ։

Ամենեն վերջ բերեցին հեքիմ Լոխմանին։

Ըսավ.— Սրան էղնի առյուծի կաթ, առյուծի ձագի փոսթի մեջ, օր ուտե, լավանա։ Թե չէ, անկարելի բան է, լավանալ չկա։

Երկու փեսան ասեցին.— Մեք կարող իք բերիք։

Բժիշկ ասավ.— Քսանուհինգ ավուր մեջ տեղ պետք է պատրաստ ելլա, թե չէ՝ կմահանա։

Նա մարթիկ ասեցին.— Այո, մեք կհասցուք քսանուհինգ ավուր մեջ։

Բժիշկ ասավ.— Դու մեկ փեսա մը ունիս, էն ի՞նչի չես բերիր։

Թագավոր էնքան տժգոհ էր, որ չէր ուզեր էնրան բերել, թեև մահվան տուն էր հասել։

Բժիշկի ստորագիր առին թագավորի էրկու փեսեք ու գացին։

Էկավ պզտիկ ախչիկ տուն, ինչպես որ բժիշկ խոսացիր էր, փեսաներ գացին, ախչիկ գնաց Քյալի մոտ։

Քյալը ելավ, հեծավ իր աղտոտ ձին, խարճըկաթն էրեց հրացան, ռաֆատեն էրեց մառտալ գընաց։ Երեխեք ընկան Քյալի ետև, քարոտեցին, ինք փախավ, գնաց։ Երփ քաղաքեն դուրս ելավ, գնաց մի խան։ Խանչուն ասավ.— Գիտե՞ս, աս իմ ձին կհանձնեմ քեզի, տասնըհինգ օրեն կիգամ։ Քու փող կիտամ, կառնիմ իմ ձին, կէրթամ։

Քյալը ընկավ ճանապարհ, կանչեց իրեն աստված, իրեն քյալը քաշեց գլխեն, վառեց մազ, ձին պատրաստ կանգնավ առաջ։ Հեծավ իրեն ձին, տվեց ճանապարհ առաջ՝ ույանի, բու յանի*, քշեց հինգ ավուր ճանապարհ։ Վեցերորթ ավուր վրա հասավ մի ծեր մարթու մոտ, օխտ ճանապարհի վրա նստեր էր։

Հարցուց մարթուցմեն.—Աստից էրկու ձիավոր էկան անցա՞ն։

— Հա՛,— ասավ,—զավակս, էրկու ձիավոր էկան, անցան։

Հարցուց.— Ի՞նչ ասեցին քեզիկ։

Ասավ.— Ինձի ասեցին թե՝ մեր աներ հիվանդ է, մեք պիտի էրթանք անմահությունի ջուր ու առյուծի կաթ՝ առյուծի փոստի մեջ բերեք։ Ես ցույց տվեցի ճանապարհ իրենց։

Ասավ.— Վի՞ր ճանապարհով գացին, հայրիկ, ինձի ալ ցույց տուր։

Ասավ.— Օղուլ, ես որ տասնուհինգ տարեկան իմ էղեր մինչև հիմա իմ յոթանասունհինգ տարի է, էս ճանապարհի վրա նստած իմ էղիր։ Որն էս ճանապարհից գացիր է, էլ չէկիր է։ Նրանց էլ ասի, իս մտիկ չտվեցին, գացին։

Ասավ.— Ես ալ պիտի էրթամ։

Ասավ.— Դու ափսոս իս, ինձի մտիկ տուր։ Մի էրթա էտ ճանապարհով։

Նա մարթ ասավ.— Ես պիտի էրթամ։ Էտ մարթիկ ի՞նչքան ժամանակ առաջ ին գնացիր։

Ասավ.— Կըլլա հինգ սահաթ առաջ։

---

* Այն կողմ, այս կողմ (Ս. Բ.)։

Ըսավ.— Հայրիկ, մնաս բարով։

Ու ընկավ ճանապարհ, գնաց։ Քշեց ձին, գեղի մը ռաստ էկավ։ Առավ հոխե մի խնձոր, հոխե մի կաթ, մի ուլու փոսթ, լեցուց կաթը մեչ, կապեց բերան, տվավ ճանապարհ առաջ ու գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, ճանապարհ փոխեց, էկավ բաշանախներու առաջը կտրեց։ Ճամբու վրեն կանգնավ, տեսավ էրկու ձիավոր էն կողմեն կուգան։

Ըսեցին.— Բարև, ախբեր։

Ըսին.— Աստծու բարին, ախբեր ջան, հ՚ու՞ր իք էկիր ու հ՚ու՞ր կէրթաք։

Ըսեցին.— Կէրթաք բժշկութենի տեղի համար։

Նա ըսավ.— Բժշկութենի տեղն ի՞նչ է։

Ըսեցին.— Առյուծի կաթ, առյուծի ձագի փոսթ, օր անմահութենի խնձոր էղնի հետ։ Այս է բժշկի ըսած տեղն։ Տանինք մեր աներն ուտե, լավանա։

Ըսավ.— Թե ես օր տամ էտ տեղեն, ի՞նչ պիտի տաք ինձի։

— Ինչ օր աստվածութեն էրկրիս երեսին ստեղծեր է, լեզուդ բացվի, իտանք։

Ըսավ.— Ո՛չ փողի կարոտ իմ, ո՛չ հացի։

— Ի՞նչ կուզիս, օր մենք տանք, ուզե։

Ըսավ,— Եթե օր տաք, ձեր պառեկին վրա մեկ-մեկ դաղ զարկիմ։

Մեծ փեսան շուտ ընտունեց, փոքրը՝ դժվար։ Ձիփլըխցուց, դաղմա զարկեց։ Առան իրենց ձին, իրենց կաթ ու գացին։

Քյալը հեծավ իրեն ձին, աստված կանչեց, ընկավ ճանապարհ, շարունակեց։

Ութ օր գնաց, ին ավուր վրա ձին կայնավ, էլ չգնաց։ Լավ խամչի մի զարկեց ձիուն։ Ձին ըսավ.— Է՛, իսանօղլի, խում կաթ կերողին փիր, իթիբար չկա։ Էստեղն է առյուծի անտառ, էլ հ՚ու՞ր էրթաք։

Իսկուն Քյալը ձիու վրավեն իշավ, ձիու ճակատ պագեց։—Է՛,— ըսավ,— կերպ ցույց տուր, օր էրթաք։

Ըսավ.— Էդ առյուծ հիվանդութեն ունի։ Իր օտքեն է վերքոտ, քարխեծ է եղեր։ Կէրթաս առյուծին մոտ, հ՚իսուն քայլի հեռավորության վրա կմնաս, քեզի տեխ ծառի քոքի տակը լավ կփորիս, վիր ժամանակ առյուծ իր օտք պարզեց, նետ ու անեղ կզարկիս։ Երփ օր վերք տբաքավ, առյուծ կկատղի, անտառի ծառներ կկոտռտե։

Երփօր առյուծի հերսեն քոմն էկավ ու քնավ, զարթավ, օտքին հանգստություն էկավ։

— Ա՜խ,— ըսավ,— ով օր զարկիր էր իմ օտքին, աստեխ էղներ, հոքիս ուզեր, հոքիս պիտի տայի իրեն։

Երփ օր խոսքն բերնեն ելավ, տղան վեր թռավ, ըսավ.— Ես իմ զարկող։

Ըսավ.— Ուղե օր ես տամ։

Ըսավ.— Ես կուզիմ՝ քու ծծի կաթ ու քու ձագին փոսթ։

Առյուծ մի քիչ կանգ առավ, ըսավ.—Տժվար է մարթ իր զավակ տա մորթին։

Երփ օր իր ցավը միտն ընկավ, օր մի տարի ու իրեք ամիս քաշիր էր, ձագը տվեց, իսկույն տարավ, մորթե։

Ըսավ.—Ես իմ ձագ տվեցի, բայց գու օխտ լեռան ետև պիտի տանիս, մորթիս, օր ձայն ես չիմանամ։ Թե օր ես ձայն առի, կիգամ քեզ կտոր-կտոր կանիմ։

Ձագ տարավ, յոթ լեռան ետև մորթեց։ Առյուծ ձագի ձայն իմացավ, ընկավ ճանապարհ, օր մարթուն պիտի վնասեր։ Տաս վայրկյան գնաց, վերքն ընկավ միտ, ետ տարցավ։

Մարթ փոսթն առավ, էկավ։ Կթեց կաթն, անմահութենի խնձոր տվեց, կաթ լցեց փոսթի մեջ։

Ըսավ.— Էկիր իս բարով, գնա խերով։

Հեծավ իրեն ձին, տասնուչորս ավուր վրան հասավ ծերունու քով։

— Այ,— ըսավ,— հայրիկ, նա էրկու մարթ էկա՞ն, գնացի՞ն։

— Այո,— ըսավ,— զավակս, ես հոս էսքան նստիր իմ, մեկ մարթ մի էս ճանապարհից չէր տարցեր։ Բայց էն երկուսն էլ էկան, ու գու ալ էկար։

Ըսավ.— Հայրիկ ջան, մնաս բարի։

Ու ձին քշեց, ընկավ ճանապարհ։ Հինգ ավուր հասավ խանի մոտ, իշավ ձիու վրավեն, իրեն քյալը քաշեց գլոխ։ Գնաց հինգ օսկի տվեց խանչուն, առավ ուր ձին, խաճրկաթ ու ռաֆատեն։

Հեծավ, ընկավ քաղաքի ճանապարհ։ Երփ մտավ քաղաքի մեջ, կրակ թափավ Քյալի վրա։ Ինչքան փախցուց իրեն ձին, էրեխեսնու ձեռնեն չազատվավ։ Գլոխ չարդելեն, Քյալը իրեն տուն մտավ։ Կնկան ըսավ.— Բաջանախներս բերեցի՞ն տեղը։

Ըսավ.— Բերեցին տեղը։

Երփ աչիկ ելավ, պիտի էրթար հոր տուն, Քյալն ելավ, տվավ մի գավաթ կաթ, մի խնձոր։

Ըսավ.— Կտանիս, կես գավաթ կաթ կիտաս, կխմե, կես խնձոր կիտաս, կուտե, ուտելեն սորա նա կուզե, չըլլա թե տաս, որ ժամանակ օր ըսավ՝ ի՞նչի չիս տար, ըսե՝ փեսատի ուզե, թող գան օր տամ։

Երփ փեսան կանչեց, էկավ տուն, պատասխանեց Քյալն.— Քու անդրանիկ փեսաներ բերեցին տեղը քեզի։ Օր բերեցին լավացուցի՞ն քեզի։

Ըսավ.— Ոչ։

Ըսավ.— Ի՞նչպես դու քու փոքր ախչիկ չէր թողներ իգար տուն. քու բժշկի ստորագիր քու անդրանիկ փեսաներու հետն է։

Նա պատասխանեց.— Այո, իրենց հետն է։

Ըսավ.— Կանչե քու փեսաներ, թող գան այստեղ։

Փեսաներ կանչեցին։ Էկան, բարև տվեցին ու բարևն առան։

— Այ,— ըսավ,— ախբեր, դուք ձեր տեղն վի՞ր տեղեն բերեցիք։

— Առյուծից,— ըսավ,— առանք։

Ըսավ,— Դուք օր գնացիք, ո՞վ էր նստե առյուծի ճանապարհին։

Ըսավ.— Մի ծերունի մարթ։

— Ի՞նչ պատասխանեց ձեզ։

Ըսավ.— Ճանապարհի հետ ով գնացիր է, էլ չէկիր է ետ։

Ըսավ.— Ընտկից էնդիեն շատ գնացի՞ք։

Ըսավ.— Շատ գացինք։

Ըսավ.— Ձեզի ո՞վ հանդիպավ։

Ըսավ.—Մեզի մի մարթըմ հանդիպավ։

— Ի՞նչպես մարթ մ'էր։

— Մի երիտասարթ տղա էր։

Բժիշկ նստած է, ինչ օր կխոսան, կդրե, գիտե՞ս։

— Երփ օր է մարթ հոս էղնի, պիտի ճանաչի՞ք։

— Այո,— ըսավ,— ես ինքս կճանաչեմ։

— Նա ձեզի ի՞նչ ծախեց։

— Էտ տեղը մեզի նա ծախեց։

— Ի՞նչ տվեցիք տեղի գին։

— Բան չառավ մեզանից։

— Պատճառ ի՞նչ էր, բան չառավ։

— Պատճառ ան էր, օր ինքը տեղն տվավ մեզի, մենք ասեցինք իրեն՝ ուզե, ինչ կուզիս, մենք իտանք քեզի, ուզեց օր դաղմա զարկեր մեր վրան։

— Ձեր վի՞ր տեղն ուզեց դաղմա զարկեր։

— Պառեկի վրա զարկեց։

— Հիմի էստեղ էղնի, կճանչե՞ք էտ մարթ։

— Այո, կճանչինք,— ըսեցին։

— Մե քիչ սպասեք, ես ելնամ դուրս, իգամ։

Երփ ելավ դուրս, իրեն քյալը գլխեն հանեց, մազը վառեց, ձինը պատրաստ կայնած, շորերն հագավ, զենք առավ վրայեն, կապեց, ձին արցակեց գնաց։ Ինք զենքով տուն էկավ։

— Ա՜,— ըսեցին,— ասի՜ էր մեր տվող մարթը։

Քյալն ասավ.— Որ ճանաչեք, ես ինքս Քյալն իմ,— ասավ,— կխընթ-
րիմ, մեկ էսուց մարմին մերկացուցեք։

Դաղեր երփ տեսան, Քյալի ստորագիր վրան, ամեն մարթ զարմա-
ցավ։ Էտքան ժողովուրթի մեջ, ինք էղիր պախարակիչ, բայց ուրիշներ
խայտառակվան։

Թագավորին տվեց կաթը ու խնձորը, երփ կերավ, էղավ տասնու-
հինգ տարեկան երիտասարթըմ ու նստավ յաթախի մեջ։ Ասավ.— Ինչ օր
ուզիս, քեզ տամ։

— Ես ոչ մի բան չիմ ուզեր քեզնից։

Ասավ.— Ես իմ թագավորության կես կիտամ քեզի, իմ ժառանգ-
դու իս։

Էնուք հասան ուրենց մուրազին, գու էլ հասնիս քու մուրազին։